ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» հունիսի 2025թ. ք. Երևան № 181-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2025 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդակցական մարմին ստեղծելու և դրա գործունեության կարգը հաստատելու մասին» 21-Լ հրամանի հավելվածի 5-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդակցական մարմնի (այսուհետ՝ կոլեգիա) կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի կոլեգիայի նիստերի քարտուղար նշանակել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետին:

3. Սույն հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն

կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ա.Ա. Նահապետյան

09.06.2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
« » 20 թ. թիվ – Ա հրամանի

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ

Արթուր Նահապետյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ (կոլեգիայի նախագահ)
Էդիկ Հակոբյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ (կոլեգիայի անդամ)
Արտակ Պողոսյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ (կոլեգիայի անդամ)
Էդգար Պողոսյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի արդարադատության շահերի դեմ ուղղված, ինչպես նաև իրավապահ մարմինների ծառայողներին վերագրվող հանցագործությունների քննության վարչության պետ (կոլեգիայի անդամ)
Աշոտ Օհանյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տնտեսական գործունեության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետ (կոլեգիայի անդամ)
Գևորգ Հայրապետյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի հանրային ծառայության շահերի դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի պաշտոնակատար (կոլեգիայի անդամ)
Դավիթ Կոստանդյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի սեփականության դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետ (կոլեգիայի անդամ)
Բորյա Չիլինգարյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի անդրազգային, ինչպես նաև կոռուպցիոն այլ բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի պարտականությունները կատարող

	(կոլեգիայի անդամ)
Գարեգին Բեգոյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ընտրական, ինչպես նաև մասնավոր ոլորտում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետ (կոլեգիայի անդամ)
Կամո Շառոյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության և վերահսկողության վարչության պետի պաշտոնակատար (կոլեգիայի անդամ)
Հայկ Գրիգորյան	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության պետ (կոլեգիայի անդամ)